

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ո Ր

Հայաստանի Հանրապետության կառավարության և վրաստանի Հանրապետության կառավարության միջև վրաստանի Հանրապետության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող վրաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանվածության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և վրաստանի Հանրապետության կառավարությունը, որոնք այսուհետև անվանվում են կողմեր, ձգտելով երկու պետությունների տարածքներում քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանվածության ոլորտում համագործակցության համակողմանի զարգացման,

համաձայնագրի ենթոցործակցում.

Հ Ո Գ Վ Ա Ծ 1

Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է այն անձանց (այսուհետև՝ աշխատողներ), ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների վրա, որոնք հանդիսանում են պետություններից մեկի՝ (այսուհետև՝ մեկնման պետություն) քաղաքացի կամ նրա տարածքում ունեն ձեռնարկային բնակչության տեղ և աշխատանքային պայմանագրի (կոտորակի) պայմանների հիման վրա իրականացնում են իրենց աշխատանքային գործունեությունը մյուս պետության (այսուհետև՝ աշխատանքի տեղադրման պետություն) տարածքում:

Հ Ո Գ Վ Ա Ծ 2

Մարմինները (այսուհետև՝ Լրագործած մարմիններ), որոնց վրա դրվում է սույն Համաձայնագրի իրացումը հանդիսանում են.

Հայաստանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը,

վրաստանի կողմից՝ վրաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարությունը,

Սույն Համաձայնագրի գործնականում իրականացման նպատակով Լրագործած մարմինները ստեղծում են համատեղ աշխատանքային խումբ, որի ինդիկատորների մեջ են մտնում քաղաքացիների՝ սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքների ապահովման հարցերի քննարկումը և առաջացած հիմնահարցերի լուծման ուղղությամբ երաշխավորությունների փոփոխությունը:

Լրագործած մարմինները հաստատում են աշխատանքային խմբի աշխատակարգը եվ նրա դրույթները:

Հ Ո Գ Վ Ա Ծ 3

Այն տարիքը, որից սկսած բույլաբերվում է քաղաքացիներին ընդունվելու աշխատանքի, որոշվում է աշխատանքի տեղադրման պետության օրենսդրությամբ:

Աշխատողի ժամանուձը աշխատանքի տեղավորման պետության, կրա մալը եւ աշխատանքային գործունեությանը կարգավորվում են այդ պետության օրենսդրությամբ:

Աշխատողի աշխատանքային գործունեությունը ձեւակերպվում է գործատուի (վարձակալի) հետ կնքված աշխատանքային պայմանագրով (կոնտրակտով)՝ աշխատանքի տեղավորման պետության աշխատանքի մասին օրենսդրությանը համապատասխան:

Գործատու (վարձակալը) կնքված պայմանագրերը (կոնտրակտները) գրանցում է Լիազորված մարմինների կողմից որոշված հիմնարկու- թյուններում:

Եթե աշխատանքային պայմանագիրը (կոնտրակտը) լուծվում է կապված ձեռարկության, կազմակերպության, հաստատության լուծարման, աշխատողների թվաքանակի կամ հաստիքների կրճատման հետ, աշխատանքի տեղավորման պետության Լիազորված մարմինը, որքանով որ դա հնարավոր է, աշխատողին քնդգրկում է այլ համարժեք աշխատանքի կնքված աշխատանքային պայմանագրի (կոնտրակտի) գործողության ժամկետով:

Աշխատանքի տեղավորման անհնարիտության դեպքում աշխատողի վրա տարածվում են այն արտոնություններն ու փոխհատուցումները, որոնք աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ նախատեսված են այդ պատճառներով աշխատանքից ազատման ենթակա աշխատողների համար:

Աշխատողին գործազուրկի կարգավիճակ տրվում է մեկնման պետու- թյան կողմից կրա օրենսդրությանը համապատասխան:

Աշխատանքի ջուկաներում իրավիճակների փոփոխությունների դեպքում, կողմերը կարող են փոխադարձ պայմանագրվածության հիման վրա մտցնել մյուս պետության աշխատողների քնդունման սահմանափակումներ:

Մեկնման պետության աշխատողները, որոնք աշխատում են աշխա- տանքի տեղավորման պետության տարածքում, զբաղվում են այն իրավ- ունքներից եւ կատարում այն պարտականությունները, որոնք սահմանված են աշխատանքի տեղավորման պետության աշխատանքի մասին օրենսդրությամբ, (ներառյալ աշխատանքային հարաբերությունների, կոլեկտիվ պայմանագրերի, աշխատանքի վարձատրության, աշխատաժամա- կալի եւ հանգստի ժամանակի ուժիմների, աշխատանքի պաշտպանվածու- թյան ու պայմանների եւ այլ հարցեր), եթե այլ բան չի նախատեսված սույն Համաձայնագրով:

Աշխատանքային ստաձը, ներառյալ արտոնյալ կարգով հաջվարկված ստաձը եւ ըստ մասնագիտության աշխատանքային ստաձը, որոնք ձեռք են բերվել կապված 2 պետությունների տարածքներում աշխատանքային գործունեության հետ, փոխադարձ կարգով քնդունվում են կողմերի կողմից, որպես իրենց աշխատողների:

Աշխատողների աշխատանքային ստաձի հաջվարկը կատարվում է այն պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում իրակա- նազվել է կրանց աշխատանքային գործունեությունը:

Հ Ո Ղ Վ Ա Ց 7

Աշխատողների, եւ կրակց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովման, եւ պետական սոցիալական ապահովագրության հարցերը, հնչպես նաեւ աշխատանքային պարտականութիւնների կատարման ընթացքում աշխատողի ստացած ինդամ, պրոֆեսիոնալ հիվանդության կամ առողջության այլ վնասվածքների հետեւանքով կրած վնասի փոհանուցման կարգը կարգավորվում է առանձին համաձայնագրերով:

Հ Ո Ղ Վ Ա Ց 8

Աշխատանքի տեղավորման պետության տարածքում աշխատող աշխատողներին տրվող բոլոր տեսակի նպաստները եւ զմարուճները կապված ժամանակավոր անաշխատունակության, հիւրության եւ ծննդաբերութիւնների, երեխայի ծննդի, երեխայի իւամքի համար տրվող արձակուրդի եւ այլ դեպքերի հետ, զմարվում եւ իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության օրենսդրության հիման վրա:

Բոլոր ծախսերը կապված նշված նպաստների եւ զմարուճների տրման հետ կրում է աշխատանքի տեղավորման պետութիւնը:

Երեխաների դաստիարակության եւ իւամքի հետ կապված ընտանիքներին նշանակվող եւ զմարվող նպաստները իրականացվում են ըստ երեխաների բնակության վայրի կողմերի օրենսդրութիւններով սահմանված կարգով եւ չափերով:

Հ Ո Ղ Վ Ա Ց 9

Կողմերից որեւէ պետության տարածքում սույն Համաձայնագրի իրացման նպասակներով սահմանված ձեւով տրվող փաստաթղթերը կամ սահմանված կարգով որակց զավերացված փաստիւնները մյուս պետության տարածքում ընդունվում են առանց լեգալացման:

Սույն Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման հետ կապված փճեւի հարցերը լուծվում են կողմերի միջեւ կոնսուլտացիաների մակարհոգով:

Հ Ո Ղ Վ Ա Ց 10

Սույն Համաձայնագրից կնքվում է հիւց տարի ժամկետով եւ կարող է ամեն անգամ մեքենաբար երկարացվել մեկ տարով, եթէ կողմերից ոչ մեկը համապատասխան ժամանակաշրջանի ազարտից ոչ պակաս քան 6 ամիս առաջ գրավոր չի տեղեկացւի դրա գործողության դադարեցման գնաբերյալ իր դիտավորութիւնները:

Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում նրա դրույթները ուժի մեք են մնում գործատուների /զարձակալների/ հետ աշխատողների կնքած աշխատանքային պայմանագրերի նկատմամբ՝ մինչեւ պայմանագրերի ժամկետի ազարտը:

Սույն Համաձայնագրում կողմերի համաձայնութիւնով կարող են մացվել փոփոխութիւններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրութիւններով:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում նրա ուժի մեջ
մտնելու համար առհրաժեշտ ներպետական պայուշած ընթացակարգերի
կատարումը հաստատող վերջին ծանուցման օրվանից:

Կատարված է թիվ 3-ի քաղաքում 1993 թ. " 3 " -ին,
երկու բնագիր օրինակից, յուրաքանչյուրը հայերեն, վրացերեն
և ռուսերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավա-
սարագր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ



ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ

